ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ
ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ
ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Հաշվետվություն

Հարգելի տիկին Հայրապետյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2024 թվականի մայիսի 06-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 06-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

✓ ուսումնասիրել եմ պետական վերահսկողության և վարչական վարույթներին առնչվող կազմված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, թերությունները և խնդիրները, իրականացրել ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների ուսումնասիրություն:

Հայտնաբերել եմ հետևյալ թերությունները՝

- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ խախտումը չի նկարագրվում կամ անորոշ է նկարագրվում,
- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվում է լիազոր անձի անունով, մինչդեռ լիազորված անձը պատասխանատու անձ չէ, քանի դեռ հրաման չկա, նա իրավունք ունի միայն ստորագրելու,
- հարցերի շրջանակից դուրս հարցեր են ստուգվում և որպես խախտում արձանագրվում, ինչը արգելվում է,
- տնտեսավարողներին ծանուցումներ ուղարկելիս դրանց մեջ ստանալու օրը չի նշվում, ինչը պարտադիր պայման է՝ պատշաճ ծանուցում ապահովելու համար,
- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ պետք է նշվի անհատ ձեռնարկատեր է, թե ֆիզիկական անձ և համապատասխանաբար նրանց տվյալները, սակայն լինում են դեպքեր, երբ չի նշվում,
- տնտեսավարողներին ուղղված ծանուցման ձևաչափը երբեմն չի համապատասխանում գործող տարբերակին (հին բլանկներ են օգտագործվում),
- վարչական իրավախախտումների արձանագրության և ստուգման ակտի մեջ տարանջատված չեն լինում իրացմանը և արտադրությանը վերաբերող խախտումները,
- արտադրական գործունեության կասեցման փաստի ժամանակ օրենքով նախատեսված եզրակացության փոխարեն ներկայացվում են զեկուցագրեր,
- վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրության, ստուգման ակտի և ստուգման ակտի նախագծի կազմման ժամկետները երբեմն չեն պահպանվում,

- տարբեր մարզերում միևնույն տնտեսավարողի հասցեներում վերահսկողական միջոցառում իրականացնելիս հաճախ մեկ մարզի կողմից է ստորագրվում ստուգման ակտը և ակտի նախագիծը, իսկ մյուս մարզից միայն զեկուցագիր է ներկայացվում,
- վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում վարչական վարույթների ժամանակ, երբ առկա է իրավախախտում տվյալ հարցերի շրջանակում, և ծանուցում չի հանձնվում:

✓ ներկայացնում եմ հետևյալ առաջարկությունները՝ հանձնարարել մարզային կենտրոնների ղեկավարներին իրենց գործառույթների շրջանակում կազմակերպել նշված թերությունների վերացումը՝ վերը նշված խախտումները ներկայացնել տեսուչներին, կազմակերպել վերապատրաստում տեսուչների համար:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

06.08.2024թ.